

են դատապարտել, և օժանդակ կլինին պապին «կառավարելու եկեղեցին, մաքառելու մուրումնայինների գէմ, պաշտպանելու ճշմարտութիւնը մինչև մահ»:

Դոմինիկեան կարգի գեներալին ուղղած մի ուրիշ գրութեամբ մատնացոյց է անում պապը թովմաս Ագուլնացու վերայ՝ որպէս աստուածաբանական գիտութեան նախադադափարի վերայ. նրա հետևողութեամբ Դոմինիկեանները պէտք է մշակեն աստուածաբանական գիտութիւնները ու դաւանաբանութիւնը յատկապէս և մաքառեն նոր ուղղութիւնների մուրումնայինների գէմ:

Բարեփոխութեան բարեկամ կաթողիկոսների պարբերական հրատարակութիւններն ու գրքերը պապի ցանկութեան համեմատ կարգընտրելի, եպիսկոպոսների ինքեքս կոնգրեգացիոնի կողմից նկատողութեան են ենթարկուում կամ արգելւում:

Ներկայ տարու յուլիոսի 17-ին հրատարակուեց վաղուց սպասուող պապի նոր սիլլաբուսը, որ կազմում է հռոմէական եկեղեցու այժմեան ամենախոշոր եղելութիւնը: Իսկապէս այս սիլլաբուսը պէտք է ի լոյս հանուէր միմիայն օգոստոս ամսում պապի շրջաբերականի հետ միասին, բայց, ինչպէս երևում է, վերջերս հռոմէական եկեղեցու մէջ սկսուած (յատկապէս Գերմանիայում) գործնական և կրօնական ազատ շարժումը ստիպել է պապին շտապել և հրատարակել եղածը: Բարեպաշտ Պիոս X-ը, ինչպէս Ֆրանսիական նոր օրէնքի (եկեղեցու և պետութեան բաժ.) առթիւ արձակած շրջաբերականից առաջ, այժմ ևս պատուիրեց նախ քան շրջաբերականի հրատարակումը աղօթել եկեղեցում և վարդապետում, ուր նորան աղօթքի ժամանակ, ինչպէս ասում են, երևում է տեոիլք (Աստուածամայրը—Madonna del Carmine) և աւելի ևս ամրապնդում իւր նոր որոշման մէջ:

Նոր սիլլաբուսը նշում է «Ժամանակի «գլխաւոր մուրումնայինները» 65 յօդուածներով, որոնք են՝ եկեղեցու հեղինակութեան վարդապետութիւն (1—4), մուրումնայինների որոշումն (5—8), սուրբ գրքերի ներշնչման վարդապետութիւնը (9—12), նոր կտակարանի ծաղման պատմութիւնն ու էութիւնը, մասնաւորապէս Յովհաննու աւետարանից սկսած (13—19), յայտնութիւնն ու եկեղեցու վարդապետութիւնը այդ առթիւ (20—25), դաւանանքների էութիւնը (26), Քրիստոսի աստուածութիւնը (27—35), Նորա յարութիւնը (36—37) և խաչելութիւնը (38), խորհուրդների ծագումը (39—51), եկեղեցու

մասին (52—54), Պետրոսի դիտաւորութիւնն ու հռոմէական եկեղեցին (55—56), ճշմարտութեան անփոփոխելիութիւնը (58), եկեղեցու վարդ․ սկզբնաւորութեան մասին (59—62) և եկեղեցու և գլխաւթեան յարաբերութիւնը (57 և 63—65):

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս տարի Զուիցերիայի մի քանի կանտոններում եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցը հրատապ բնաւորութիւն էր ստացել: Առաջին անգամ այս հարցը բարձրացրեց Նոյեմբուրգի կանտոնը, բայց ազգային եկեղեցին յաղթող հանդիսացաւ, մերժելով բաժանման օրինագիծը: Նոյն խնդիրը, թէև յարուցուած էր Վատտ կանտոնում, բայց բաժանման սակաւաթիւ կողմնակիցներն ոտիպուեցան յետ կենալ իրենց մտադրութիւնից, պարզ նկատելով ժողովրդի տրամադրութիւնը: Ընդհակառակ բաժանման օրինագիծն անցել է ժընեւի կանտոնում, թէև ձայների շատ շնչին առաւելութեամբ: Ժողովրդի համարեա կէսը չի մասնակցել ձայնատուութեան. շատերի համար միանգամայն անակընկալ էր բաժանման օրինագծի ընդունելութիւնը: Ժընեւում այսպիսի փորձեր մի քանի անգամ էին եղել և միշտ եկեղեցու և պետութեան ներկայ հարաբերութեան պահպանութեան կողմնակիցները յաղթող հանդիսացել: Այս անակընկալ յաղթութեան նպատակ էն հետեւեալ հանգամանքները: Կաթոլիկ եկեղեցին Կուլտուրկամիլի ժամանակից 1873 թուից զրկուած էին պետական օժանդակութիւնից, նորա տեղն էր բռնել այսպէս կոչուած կաթոլիկական ազգային եկեղեցին: Բուն կաթոլիկները, որ հետզհետէ բազմանում էին Ֆրանսիայից և Սալոյայից եկած գաղթականներով, այս բանը մարսել չէին կարող և քաջարձակ կողմնակից էին եկեղեցու և պետութեան բաժանման, որովհետև հարուածն տմբողջապէս բողոքականութեան էր հասնում: Բաժանման ձայնակցել են սոցիալիստները, ինչպէս և արմատականների և դեմոկրատների մի մասը: Բաժանման ձայն են տուել և այսպէս կոչուած անկախ եկեղեցու համայնքի անդամները: Բայց աւելի նպատակ էն կալվինական կամ ժընեւի ազգային եկեղեցու 17 հոգաւորականների կողք, որոնք համոզուած են, որ պետութիւնից անկախ և բաժան եկեղեցին աւելի կծաղկի և արդիւնաւոր կլինի ժողովրդի համար: Այսպէս թէ այնպէս ժընեւի կանտոնում եկեղեցու և պետութեան բաժանումը իրողութիւն է. սակայն այստեղ օրէնքը այնպիսի թշնամական ոգով չէ խմբադրուած, ինչպէս